

ՄԵՑ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԵՍ ԴԱՐՁ

(Հոբելյանական գիտական նստաշրջան պատմության ֆակուլտետում)

Հայ ժողովուրդը, զրկվելով իր պետականությունից, դարձրեց շարունակ օտար նվաճողների, վաշկատուն ու բարբարոս ցեղերի ու ագրեսիվ պետությունների կողմից հաճախակի կազմակերպվող ասպատակությունների ու պատերազմների, աժերի ու թալանի, բռնությունների ու հալածանքների հետևանքով թողել է իր հայրենի երկիրն ու ապաստան փնտրել այլ ափերում: Այդ վայրագություններն ու տեղահանությունները, զանգվածային կոտորածներն ու շարքերը թուրք բարբարոսները աժելի սաստկացրին անցյալ դարի վերջերին և մեր դարակազրին: Մասնավորապես 1915 թ. Մեծ Լեզոնի շրջանում Արևմտյան Հայաստանից շուրջ երկուսուկես միլիոն հայեր արտաքսվեցին իրենց հայրենի բնօրրանից, որոնց մեծ մասը սրի քաշվեց քարոտի ճամփաներին (1,5 մլն.), իսկ մյուս մասը—ցրվեց աշխարհով մեկ:

Աշխարհասփյուռ հայության այդ բեկորները հետազայում միշտ էլ ձգտել են վերադառնալ իրենց հարազատ երկիրը և կառուցել ու շինացնել հայրենի հողը: Այդ երազանքը իրականություն է դարձել միայն Հայկական պետականության վերականգնմամբ, մասնավորապես Հայաստանի Երկրորդ Հանրապետության ստեղծման շրջանում, 1920-ական թվականներից սկսած: Սակայն զանգվածային ամենամեծ հայրենադարձությունը տեղի է ունեցել 1946—48 թվականներին, որի կես դարը լրացավ այս տարի:

Այդ հիշարժան տարելիցին էր նվիրված պատմության ֆակուլտետում ղեկավարվող 13-ին տեղի ունեցած համատեղ գիտական նստաշրջանը, որը կազմակերպել էին հիշյալ ֆակուլտետի ղեկավարն ու Հայաստանի հայրենակցական միությունների խորհուրդը: Նիստը բացեց պատմության ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը, որը հակիրճ բնութագրեց հայրենադարձության նշանակությունը թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի համար: Նա իրելույթում հատկապես ընդգծեց, որ հայրենադարձությունը այսօր էլ անհրաժեշտ է իր անկախության ուղին բռնած Հայաստանի Հանրապետության համար, ուստի և մեծ հայրենադարձության 50-ամյակի նշումը և նրա նշանակության ու ավանդույթների վերհանումը արդիական ու կարևոր նշանակություն ունի մեզ համար: Մենք պետք է արգելք հանդիսանանք արտագաղթին, վերջում ասաց պրոֆ. Բ. Հարությունյանը, և ամեն ինչ անենք, որպեսզի կազմակերպվեն նորանոր ներգաղթներ՝ ի շահ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության զարգացման ու բարգավաճման:

«Մեծ հայրենադարձության 50-ամյակը» — այսպես էր կոչվում նոր և նորագույն պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Մալիքբեկյան:

Նի ղեկուցման թեման, որի մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացրեց վերջին 75 տարիների ընթացքում կազմակերպված հայրենադարձության հետ կապված խնդիրները:

Հայրենադարձությունը հայ ժողովրդի ազգահավաքման, նրա կոնսոլիդացիայի և հետագա զարգացման ու հզորացման կարևոր գործոններից մեկն է, ասաց ղեկուցողը, մինչդեռ արտագաղթը նրա կենսական ուժերի ցրման, թուլացման և, վերջին հաշվով, ուժացման գործընթաց է:

Դեպի հայրենիք սփյուռքահայերի կողմնորոշվելու գործում վճռական նշանակություն ունեցան հանրապետությունում գտնվող աժելի քան 200 հազար արևմտահայ տարագիրների նկատմամբ հայրենի կառավարության ցուցաբերած հոգատարությունը, նրանց հարցի արմատական լուծման և Սփյուռքի հետ կապեր հաստատելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, շարունակեց ղեկուցողը:

Սփյուռքահայության հայրենադարձվելու ձգտումը առավել հրամայական դարձավ 1922—23 թթ. տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսից հետո, այնուհետև ասաց նա, ուր արևմտյան տերություններն ու քեմալական Թուրքիան, ոտնակոխ անելով Սևրի պայմանագիրը, փորձեցին վերջնականապես զերկամանել իրենց իսկ կողմից նենգափոխված Հայկական հարցը, ձևականորեն այն կտակելով Ազգերի լիգայի տնօրինությանը:

Չնայած գոյություն ունեցող բազմաթիվ զրգավարություններին, շարունակեց ղեկուցողը, ընդհանրելով տարագիր հայության ցանկություններին, արդեն 1921 թ. վերջերից սկսած, իրականացվեց հայրենադարձություն: Հայրենադարձվողների առաջին խումբը հայրենիք եկավ Միջագետքից՝ 1921 թ. ղեկավարներին: Նրանում ընդգրկված էին այնտեղ ապաստան գտած վասպուրականցիները, Ահա այդ ժամանակից ըսկըսած և որոշ ընդհատումներով մինչև 1980-ական թվականների կեսերը շարունակված այդ հայրենասիրական ու ազգաշահ գործը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի:

Առաջին փուլը ընդգրկում է 1921—36 թթ., երբ տարերի երկրներից, իսկ հիմնականում Միջագետքից, հայրենիք եկան 42 հազարից աժելի տարագիրներ:

Երկրորդը՝ 1946—48 թթ. ընդգրկող փուլն է, որը հայտնի է մեծ կամ զանգվածային հայրենադարձություն անունով, երբ աշխարհի 12 երկրից հայրենիք եկան մոտ 90 հազար հայ կամ 20.646 ընտանիք: Թեպետ շատ աժելի մեծ էր հայրենադարձվել ցանկացողների թիվը, սակայն արտաքին և ներքին տնտեսական մի շարք հանգամանքներով պայմանավորված,

1949 թ. դադարեցվեց զանգվածային հայրենադարձությունը: 1950-ական թվականներին անհատական կարգով կամ փոքր խմբերով հայրենիք եկան ևս 4000-ից ավելի սփյուռքահայեր, իսկ 1961 թ. օգոստոսին որոշում ընդունվեց զանգվածային հայրենադարձությունը վերսկսելու մասին:

1962 թ. սկսվեց հայրենադարձության նոր՝ երկրորդ փուլը, և մինչև 1980-ական թվականներին կեսերը աշխարհի 30 երկրից հայրենիք եկան 32 հազար սփյուռքահայեր կամ 6795 ընտանիք:

Եթե ի մի բերենք խորհրդային իշխանության տարիներին հայրենիք եկած ներգաղթածների ընդհանուր թիվը, վերջում ասաց զեկուցողը, ապա կարելի է ասել, որ այն հասնում է շուրջ 200 հազարի:

Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանում ներգաղթի և արտագաղթի հիմնահարցերին էր նվիրված հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀԳԱԱ ակադեմիկոս Լ. Խուշշուղյանի զեկուցումը, որի մեջ գիտնականը վերլուծեց հայրենադարձության ու հայրենալքության հետ կապված բազմաթիվ կնճռոտ հիմնախնդիրներ և աշխատեց տալ դրանց համոզեցուցիչ պատասխաններ: Նա հատկապես ընդգծեց, որ այն հայրենադարձությունը, որը տեղի է ունեցել վերջին յոթուկես տասնամյակների ընթացքում, հատկապես 1946—48 թթ. և դրանք հետո, գիտականորեն և միջազգային ընդունված նորմերով չի կարելի հայրենադարձություն համարել, քանի որ օտար ափերում ղեգերող հայության խլայկները ոչ թե իրենց բնօրրան են վերադարձել, այլ եկել են Արևելյան կամ Խորհրդային Հայաստան՝ գրտնելու խաղաղ ու ապահով ապաստան: Եթե ներառեք վերադարձած լինելին Արևմտյան Հայաստանի այն վայրերը, որտեղից ժամանակին բռնի կերպով արտաքսվել են, ապա դա միջազգային նորմերով կարելի կլինի համարել հայրենադարձություն:

Եկել է ժամանակը, վերջում եզրակացրեց անվանի պատմաբանը, որ թե Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թե սփյուռքահայությունը պետք է պայքարեն Թուրքիայի կողմից բռնություններով իրենցից զավթված տարածքները միջազգային օրենքներով ևս վերադարձնելու համար, որից հետո նոր միայն սփյուռքահայությունը կարող է վերադառնալ իր հայրենի վայրերը, և դա նոր միայն կլինի հայրենադարձություն:

Առանձնապես հետաքրքրություն լսվեց Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Պ. Հովհաննիսյանի «Թուրքիան և հայրենադարձությունը» զեկուցումը: Նրանում հեղինակը ժամանակի թուրքական, ռուսական և այլ օտարալեզու մամուլից և արխիվային փաստաթղթերից քաղված հարուստ փաստերով ու օրինակներով ցույց տվեց, որ Թուրքիան, որը դարձրե շարունակ հա-

լածանքներով, տեղահանություններով, կոտորածներով ու ջարդերով, հայերին արտաքսել է իրենց բնօրրանից և սեփականել նրանց հայրենի հողը, դեմ է եղել հայերի հայրենադարձությանը և ոչ միայն Արևմտահայաստան՝ իր բնօրրան, այլ նաև Խորհրդային Հայաստան: Թուրքական պետության շանթերը՝ ընդհանրապես խափանելու իր երկրի տարածքում ապրող հայերի ներգաղթը Հայաստան, ակնկալվող արդյունքի չհանգեց, ասաց զեկուցողը: Թեև հազարավոր հայեր արձանագրվեցին ներգաղթ կոմիտեներում, շարունակեց նա, սակայն շատ քչերին իրավունք վերապահվեց հայրենադարձվելու:

Անսքող ուշադրության արժանացան զեկուցողի բերած փաստերը, հայրենադարձության միջոցով Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելու Խորհրդային Միության պաշտոնական շրջաններում արտահայտված միտումների վերաբերյալ: Հայրենադարձությունը դիտելով որպես Խորհրդային Միության կողմից Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց, Թուրքական պաշտոնական շրջանակները հարցը փորձում են միջազգայնացնել և հայցել ԱՄՆ-ի կամ Մեծ Բրիտանիայի աջակցությունը: Թեև թափած մեծ ջանքերին, Թուրքիան չկարողացավ կանխել Մերձավոր և Միջին Արևելքի հայության հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան: Զեկուցողը հրապարակեց նաև մի շարք փաստաթղթեր, որոնք այդ էին վկայում: Դեռ ավելին՝ Թուրքիայի ղեկավար շրջանների կողմից այդ օրերին բռնություններ ու սպանություններ են կազմակերպվել Հայաստան մեկնել ցանկացող հայերի նկատմամբ:

«1946—48 թթ. հայրենադարձության կազմակերպումը Սփյուռքում» թեմային էր նվիրված վերլուծական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, քիմիական գիտությունների դոկտոր, «Զեկուցում» պատմամշակութային միության նախագահ Գ. Գալբալյանի զեկուցումը: Իրաքի օրինակով, ուր ժամանակին հանգրվանել էր եղևնից մազապուրծ նրանց ընտանիքը, ցույց տրվեց, թե 1946—48 թթ. Սփյուռքում ինչպես է կազմակերպվել այդ հայրենադարձությունը, մասնավորապես իրաքահայությունը ինչպես է արձագանքել հայրենիքի կոչին: Համոզեցուցիչ էին նրա բերած փաստերն ու օրինակները, ըստ որոնց հազարավոր հայեր իրաքում մեծ խանգավառությամբ են նախապատրաստվել մեկնելու Խորհրդային Հայաստան: Եվ զեկուցողը ներկարգրեց հայրենադարձության այդ երկար ճամփան, և հայրենադարձողների բուռն ուրախությունն ու հրճվանքը, օր առօր հայրենի հողին ոտք դնելու նրանց տենչը: Զեկուցողը կանգ առավ նաև հայրենադարձության կազմակերպման գործում տեղ գտած թերությունների ու բացերի վրա, խոսեց հայրենադարձվածների՝ Հայաստանում կատարած հայրենանվեր քաջա-

տանջների մասին, բերեց մի շարք ծրինակներ գիտություն ու կրթության ոլորտներին:

Զեկուցումների շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Ելույթ ունեցան և հուշեր պատմեցին ազգագրության ամբիոնի վարիչ Հր. Խառատյանը, պրոֆ. Ս. Կրկյաշարյանը և ուրիշներ: Իր ելույթում Հայրենակցական միությունների խորհրդի նախագահ Ժողեֆ Ավետիսյանը բարձր գնահատեց գիտական նստաշրջանի զեկուցումները և շնորհակալություն հայտնեց պատմության ֆակուլտետի ղեկավարությանը նման համատեղ գիտաժողով անցկաց-

նելու համար: Վերջում նա նստաշրջանի մասնակիցներին նվիրեց Հայրենակցական միությունների խորհրդի օրգան «Բնօրրան» հանդեսի հերթական համարի մի շարք օրինակներ և խնդրեց աշխատակցել այդ նորաստեղծ հեղինակավոր պարբերականին:

Գիտաժողովը եզրափակեց պրոֆ. Բ. Հարությունյանը և շնորհակալություն հայտնեց նրան մասնակցող բազմաթիվ հյուրերին ու հայրենադարձներին:

Մ. Ս. ՎԱՀԱՆՅԱՆ